



Համարը N 1931-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2012.02.17/8(882).1
Հոդ. 105.1

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 27.02.2012

Ընդունման ամսաթիվը 29.12.2011
Ստորագրման ամսաթիվը 07.02.2012
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՌԻԴԻՏԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 509-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2011 թվականի N 1931-Ն

ԱՌԻԴԻՏԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 509-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Առողիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հրապարակել և Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառության մեջ դնել առողիտի և որակի վերահսկողության միջազգային ստանդարտները հայերենով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի «Առողիտի ստանդարտները հաստատելու մասին» N 509-Ն որոշման 1-ին կետով հաստատված ստանդարտները՝ բացառությամբ որոշմամբ հաստատված առողիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող ԱՍ 910, ԱՍ 920 և ԱՍ 930 ստանդարտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2012 թ. փետրվարի 7
Երևան

[Հավելված](#)
[ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1931-Ն որոշման](#)